

ՀԱՆԴԵՍ ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ

ԾՆՈՂԱՍԽԻՐՈՒԹԻՒՆ ԱՆՆԱՅԻ

(Պր. 18, 93, 168, 285, — 10, 93, 176):

ԳԼՈՒԽ Թ.

Աճնայի անձնակազմի մասին:

Երբու ամեն ի վեր մեր սքսորեայ գերդաստանն Վեննայի մէջ անգլաւորուած էր, երբ յանկարծ ծերունի Տիւպուայէն թուղթ մի ընկալաւ, որ իրեն իսպաղուածինն վրդովեց, և փոքրիկ բնակարանն ցաւով և հոգեբով լեցուց: Այս հաւատարիմագոսաւոր Փարիզ հասնելով շատ մեծ գոծուարութիւններով կարողացել է մտնել իր տիրոջ տունը և տեսել է՝ որ ամեն դռներ և գարաններ մի և անբաժանելի հասարակագետութեան անուամբն կըքուած էին: Բարեբաղդաբար գիտէր այն տեղն ուր խոսվութեան սկիզբէն մարքէզն մեծագոյն մար ըստակ թաղած էր. ուստի կը յուսար զայն իր տիրոջ տանելու կամ զրկելու: Այս ասեմք՝ որ մարքէզն իւր մեծ աղկան իմացուցել էր այն ծածկած տեղն. ուստի երբ Տիւպուայ նկուզն իջաւ, տեսաւ որ այն փոքրիկ գանձն ալ անհրեւոյթ եղած էր: Եւ ալ գործ մի չունելով հին տեղն իւր յատուկ ունեցածն առաւ ու անէն գուրս ելաւ: Նոյնպէս կըքուած գտաւ հրամանատարին տունն ալ, և գուշակելով իմացաւ թէ իր բարձրն տակէն էր այս մասնութիւնն: Մարքէզն, կիներ ու աղջկն ալ պանդխտելոց ցանկին մէջ անցած էին, և մասնաւոր թէ տեսաւ որ ցուցակին թուականն շատ օրերով յաւաւ էր քան թէ բուն իրենց պանդխտութիւնն: Ուստի տարակոյս չկար որ այն գմուռներն ալ Ֆորթնի ուղեւորն գրուած էին, որպէս զի մարքէզն ստացուածոց վրայ իւր կնոջ ունեցած իրաւունքն պահպանէ. և հետեւեալ օրն պիտութեան կայուածոց պաշտօնէ այն տերութեան անուամբն այն ստացուածոց գրաւումն հրատարակած էր. որով ամենայն ինչ կորսուած էր թէ հող թէ կահք և թէ առնելիք: Ահաւասիկ այս տխուր լուրերս կուտար Տիւպուայ իւր տիրոջ դրած նամակին մէջ:

«Ահ, խեղճ Աննա, գոյեց մարքէզուհին հաւաքելով, ինչ պիտի լինէ քո վերջ, խեղճ աղջկս. մէք մէք եղաք քո թշուառութեանդ պատ

ճառն՝ որ զքեզ մինչև այս արտառանայ երկիրն քաշեցինք բերինք. մէք քոյ ապագայ երջանկութիւնդ խանգարեցինք. մէք քոյ ծաղկահասակ տարիքդ զրկանայ և թշուառութեանդ մղեցինք: Ահ, ինչպէս պիտի կարեմք այս մեր գործած չարեացս փոխարեն առնել:

— Ինչ ասես, մայրիկ, ձեր գործած չարեանցն. հապա այս կեանքս ո՞վ տաւա ինձ. միթէ դուք չե՞իք որ իմ մանկութիւնս խնամքով մեծցուցիք. միթէ ձեզ պարտկան չե՞մ ինչ գիտութիւն և ինչ տաղանդ որ ունիմ: Հապա քոյ տերդ զոր այսօր կը վայելեմ քոյ դիրկդ գանուելուս երբանկութիւն միթէ ամենն աւելի պատուական բարեքն չեն իմ արտիս համար: Եւ ինչ բանիս պիտի գար հարստութիւնն՝ եթէ միայն ես պիտի վայելէի զնոսա, միթէ ալ յուսալու տեղ մի չմնաց մեզ համար: Ես դեռ աղայ եմ ու արիւթիւն ալ ունիմ, քո և հօրս համար աշխատելու, որպէս զի ձեր ինձ համար գործածին փոքրիկ փոխարեն մի առնեմ: Աստուած որ Սթանի մէջ իմ հօրս առջին վեհանքն պաշտպան իմ հանց, Աստուած ինքն զմեզ պիտի չթողու. և ա իմ անհրեւոյթ փորձանքներէ պիտի պաշտպանէ, և ամեն օր իրմէ խնդած գորութիւնս ինձ պիտի շնորհէ:

Տիկին Սենթ-Անտ անխոս՝ զանկին խօսքերն մտիկ առնէր, ու սիրտն սաստիկ շարժելով՝ յորդարտաստեց կը թափէր. — « Ե՛ր լաւ, սիրուն մայրիկ, տաք պղծկն, Աստուած մեզ պիտի չթողու. ինձ հետ գուշակումս աղաչէ, ինքն ինչ միտք թաւութիւն կուտայ: Աստուած իմ, քոյ գթած այքդ գարձն մօրս վրայ, խղճա իւր ցաւոց վրայ, և եթէ հանց էք զնորանոր խաւեր զրկելու, աւոր գորութիւն ինձ և մօրս առանց արանջալու վերցնելու զնոսա, օգնէ մեզ Աստուած իմ քոյ սուրբ հրամանացդ հնազանդելու:— Այս խօսքերս զրուցած ատեն, մայրն ալ նորա բոլոր ծնկան վրայ կեցած, ստացածն կը կրկնէր. ու երբ օտեց վրայ ելաւ, զԱննա ձեռքէն բռնած իրեն քաշեց և զնա գրկելով ստաց: Ե՛ր թափած արցունքս, գաւակս, ոչ այնչափ ինձ համար է որչափ քոյ, ցաւս չնըրցայ զսպել, մտածելով որ քոյ հացդ աշխատութեամբք ուսելու պիտի ստիպուիս. ահ, այս խեղճութեան հասնելու համար ծնած չէիր. յիշուէի ասեմ, սիրտս շատ տանի ու վրայ եղէ. բայց

հայարտութեան այս ակամայ շարժմանս պիտի յաղթեմ: Աստուծոյ հանդիմանիցի այսցաւալի զոհս, և ինքն թեզ օգտակար գործէ զայն, սիրելի Աննա Ե: — Այս գրուցելու ատեն, մարքելն ներս մտաւ բողոքօվն յառահաւ կերպով: Վայն զի քանի որ վննան հասեալ էին, շատեան նմա յոյս տուած էին արեւգութեան Կարողսի թիկնապաշտպան անցնելու: որովհետեւ Փարսիկոյ հետ պատերազմն հրատարակուած էր, և ամենուն աչքն այս կոյտեարազուն իշխանին վրայ էր՝ որ ինքն պիտի լինէր բանակին հրամանատարն: բայց մարքելին յոյս պարապ էլ, վասն զի այն պաշտանն զոր կը յուսար՝ ուրիշ տրուեցաւ: Եւ ժամագրութիւն միանկի չհասնիր, գողեցնելու մտածին պէս ալ յոյս չմնաց, ամեն դրուագ երեսս 'ի վեր փակուեցան, չեմ գիտար թէ ինչ պիտի առնէն և ինչով պիտի ապրիմք: Եթէ մինակ լինէին՝ կ'երթայի Փահլաւի բանակին մէջ զինուոր կը գրուէի, բայց ինչ պէս կարեմ թողու զձեզ:»

— Սիրելիս, ասոց մարքելուհին, եթէ մինակ ալ լինէիր՝ այդ բանդ չէիր կարող առնել: արգել առողութեան կողմանէ տկար ես, և գոթադրութիւնն ալ զքեզ մայեցուցած է, և առանց քոյ կենալդ վտանգի մէջ գնելու...

— Ինչ կուզես որ առնեմ ուրեմն, գողեց մարքելն կնոջ խօսքն արեւելով. գու ալ գիտես որ հազիւ թէ քանի մի ամսոց ապրուստ ունիմք բռնիքին: և ինչ բաներու վրայ որ յոյսս դրած էի պարապ էլին: զորս տեղ աչքս առայի անդին կը դարձնեմ՝ բան մի չեմ տեսնիր: Գունջ զինուոր որ գրուիմ՝ ձեզ ծանորութիւն չեմ լինիր: Ե. թովս ե. դաժն ձեզ թողով: Գոթե կարեք սակաւ մի սակելի երկար ժամանակ այնու կարելու:

— Նստ լաւ, վրայ թերաւ մարքելուհին. գու գնա, մք ալ Աննան ու ես ետեւէդ կու գամք: Ինչ, կարծես թէ թեզ պէս հիւսնալ տկար մարդուն մք միմակ ու անօգնական պիտի թողումք՝ որ օգին խտտութենէն ու զինուորական կենաց տառապանքէն չարարուիս ու մեռնիս: Եւ զքեզ կը ճանչնամ, չես ուզիր որ ուրիշներէն վար մնաս կտրձութեան ու նուրբման կողմանէ, որ յիրաւի երիտասարդի ու առողջ մարդու համար մեծ բան է, բայց հիւանդոտ ու տարիքն առած մարդու համար անկարելի:

Վերապէս մարքելն շատ գոհաբերութեամբ կնոջ խօսքի հաւանեցաւ ու միտքն դրածն էս կեցաւ: Իսկ Աննա դաշնակի ե երաժշտութեան հմուտ լինելով՝ յոյս կուտար ինքնօրացն որ իւր ձեռագլ արուեստովն պիտի կարող լինէր նուազ օգնելու: Բայց հօրն գիմաց վրայ այլալուծութիւն մի գալով այս խօսքէս, իմացաւ որ առացանք Սէլեմ-Անտի մարքելին աշխուհան հայարտութեանն գպաւ: ուստի նմա գառնալով ասաց. « Լայր իմ հաճէ ինձ մտիկ առնելու: այն սիգրուլքն որ գու իմ մտաց մէջ արուստորեւ ես՝ 'ի վաղորդ ինձ ուսուցած եմ՝ որ մարդ անին վիճակի մէջ ալ պատուաւոր մարդ կարէ լինիլ, այլոց համարումն ստանալ և հանգիստ խղճիւս ապրել: այսոր համար ուրիշ բան պէտք չէ՝ բայց եթէ իւր ընտրած վիճակին պարզեց լաւ կատարել և կրօնից հրամայածն գուրս չէնէն: Դու ալ գիտես այրիկի՝ որ այս կրօնից պարտքն կատարելովն եւ որ համբերու-

թեամբ կարող եղէ տանելու այս մանկական հասակին մէջ այն ամեն նեղութեանց՝ որ գլխէս անցին: վասն զի միտքս դրած էի որ այս համակերպութիւն՝ զԱստուած ինծի հետ պիտի հայտնեցնէր՝ զոր ես թերեւս բարեկացած էի: Հիմա կը տեսնես որ այս յոյսս պարապ չէլաւ: հիմա թէ հօրս թէ մօրս գիրկն ինծի համար բաց է, ինչպէս որ այս միայն եղած էր իմ միակ փափակս: Ահ, իմ կատարեալ երջանկութեան միայն բան մի կը պակսի, որ է քորոս ալ մեր մէջ տեսնել և այնչափ սէր ցուցանել նմա՝ որ իր սէրն ու բարեկամութիւնն ալ վստաղէի: յուսամ որ Աստուած այս նորոհքս ալ պիտի առնէ ինձ: Ուրեմն վտառէ չեղիր, հայրիկ, որ միշտ սուրբ հաւատոցս հաւատարիմ մնալով իմ սրտիս անթօնութիւնն միշտ պիտի պահէմ: ուրեմն հիմա ինչպէս կարող ես տարակրօնաւոր որ ես չկարողանամ իմ նոր վիճակիս պարտքն իրաւարելու: Իրտեմ որ այս խօսքերս քոյ գլխուս վրայ կուգան, և ներք ինձ համարձակ դրուցելու՝ թէ քոյ աղնականութեանդ նախապաշարմանց կը գալին: Այս բանին պատասխան մի միայն ունիմ: աշխատանքս մարգասանապատիւ չառնէր, և ամենէն նուազս վիճակի մէջ ալ մարդ առաքելին կարող է լինել: միեւն Նոյն ինչն Աստուած գեաւորացն օրինակով մի մեղնոյ բանն ուսուցած է: Երբ իւր անսահման իմաստութեամբն իւր Որդին աշխարհ զրկեց՝ ամենէն նուազս վիճակի մէջ ծնունդ տալով զինքն, ինչու մք ալ մեր ձեռքն եկած ինչ շափ իրեն չնմանիմք: Այն որ երկրին իշխաններն ու թագաւորներին այնչափ բարձր է՝ որչափ փայլակի մի կէտն բոլոր յաւիտեանակա նուութեան գարեհիմն: — Այս ստեղծ Աննա սակաւ մի լուց, կարծես թէ յանկարծիք մի միտքն խոր հուրդ մի ծագեցաւ: Յանկարծ ուղուրենն վաւուրեցան և ներքին հաճութիւն մի երեսին վրայ ստեղծաւ, և գրեթէ հրեշտակային պատկեր մի իր գրեմաց վրայ նկարուելով՝ այսպէս առաջ տարաւ իւր խօսքն: « Աշխարհս վրայ մի միայն բարեքն որո՞ւմ կը փափաքիմք՝ ձեր սէրն է, միացած ամեն բան ինձ համար անտարբեր է, այն միայն բաւական է ինձ: Հիմա միտքս բան մի ծագեց՝ զայն ձեզ ասեմ: հոս գեւ դիւ ոչ եր ճանաչէ և ոչ դք գիտէ թէ ես ձեր արեւնն ու հարազատ զաւակն եմ: ուստի ես այսուհետեւ ուրիշ բան չեմ՝ բայց եթէ խեղճ որք մի զոր Աստուծոյ նախախառնութիւնն ձեր իմաստը յանձնէ և Ուստի եթէ կը հաճիլ ես մեր գոթադր թագաւորին ծառաներէն միայն աղիկն պիտի սեպուիմ՝ որ գուցեք զօրեղիւր առած էք իմ մանկութեան իմաստն, իմ միտքս լուսաւորեմ, և ինձ սէր ու պարտապան կեցամ: Այսպէս որ լինի, ով կարէ արեւել-լ խեղճ որք մի որ իր երախտապարտութիւնն ու շնորհակալութիւնն իր բարեբաղաց չայտնէ, երբ ձեր նմա տուած հանձնարն ու տաղանդի կարող է ձեզ օգտակար լինել:»

Մարքելն և իւր կինն ապշած մնացին այս անակնկալ առաջարկութեան վրայ, և սակաւ մի ժամանակ լուսութիւն լինելով՝ վերջապէս Տիկնոջ Սէլեմ-Անտի շարժելով ու հեծկտալով սկսաւ ասել. « Ինչ, աղիկիս, ես մայր անունէս հրաժարիմ, երբ հազիւ թէ նորա քաղցրութեան համառուն ուղի սկսայ: և դու եր խղճիւս յինն այդ բանդ՝ ոչ ոչ, սիրելի Աննա, մի յուսար: քոյ մայրդ-

զինէն և զքեզ դուստր կոչելն ինծի մեծ պար-
ծանք է. մտքեզ հանէ այդ բանդ » :

Մարքէն կնոջ այս խօսքին չէր սպասեալ, վասն
զի Աննայի առաջարկութիւնն նմա անտեղի չէր
երեցած, և որովհետև մարքիզուհւոյն հայրը
տուութիւնն գիտէր՝ կարծէր թէ նա ալ իրեն հա-
մամտ պիտի գտուէր : Մանաւաւ, որ աղջկան
առաջարկութիւնն ուրիշ բան չէր՝ բայց իմէժ նո-
րա կոյր զկուրայի ընդունած նախապաշարմուն-
քն՝ իւր հայրական սիրոյն հետ միացնել : Աննա
արտաքուստ և օտարաց առջև անսնուն և աղ-
քատ որբ մի պիտի համարուէր, իսկ տան մէջ
զինքն աւելի սիրելով՝ այն իրենց բռնադատու-
թեան փոխարէնն պիտի աւանդէ : — Աննայի
կողմանէ ալ ամենին պատճառ մի զկար այս խոս-
հուրդէս որ քանակաւ . արգել մօր սէրն ու
մտերմութիւնն ձեռք ձգած լինելով՝ յօժարա-
կամ ինքզինքն կը զրկէր հրապարակաւ իրեն մայ-
րակոյ լինելու և զինքն իրեն մայր անուանելու :
Ուստի որ մտքէն չփոխուեցաւ . ասով իւր հայրն
ալ դոճ եղած կը համարէր և ամեն օր ալ իւր
մօր բռն լինելով՝ իրեն՝ ամենուն բարեկէն համար
գործած զայն վարձք ալ նորա սիրովն պիտի
ընդունէր : Միայն մարքիզուհւոյն գիտ՝ կը զնէր
այս խորհրդին, մինչև որ շատ դժուարութեամբ
վերադադն համոզուեցաւ, և շատ արցունք թա-
փելէն ետև, խոստացաւ ալ իւր դուստրն չկո-
չելու զնա օտարաց առջև :

Հազիւ թէ քանի մի օր անցէ էր և ահա օրա-
գիրտին կը ծանուցանենք Աննայի բնակաց
թե քանակաւ գաղչեալ ըլլալ էր կը փափաքէր
աղջիկ աշակերտներ ունել՝ իւր արուեստն ու-
սուցանելու համար : Սակայն այս ծանուցումներս
արգիւնք մի չունեցան . որովհետև Քերմանիի որ
Հայտնի և Մոզարի հայրենիքն է, գրեթէ դաշ-
նակի միակ երկրին կը սեպուի . ուրիշ կողմանէ
ալ թէ և Աննայցիք սիրով կընդունենէն պան-
դուխտներն, բայց նոցա վրայ վստահութիւն չու-
նէին, և սակաւք էին որ ուզէին տեսնել կամ
լսել գաղչեալ քանակաւ : Օտարականք առ հա-
սարակ և մատուանով Քերմանայցիք մտերմին գը-
րած են որ Փրանկիացիք երաժշտութիւն չունին,
և իրենց սկանդն քաղցրաձայնութիւն կնչ և չկըր-
նար իմանալ . զարմանալիս այն է որ Արգիւնցիք
ալ այս կարծեաց համամիտ են, իրենք որ եղանակ
մի երգելու տեղ կը սուլեն, և կատուի խառնա-
ձայն արտաքին դաշնաւարութիւն կը համարին,
և երբ մեր վրայ խօսք լինի՝ կարողն կերպով
կը պատասխանեն թէ Փրանկիոյ մէջ լաւ երա-
ժշտութիւն գտնել անհնարին է :

ՓԼՈՒՍԻ Ժ.

Երգանանդես :

Սոկայն օրագրոց ծանուցումն բոլորովին պա-
րագ չէրաւ . Պրանս պարտն սկսաւ Ժամանակե
ի վեր Աննայի կայսերական թանգարան վար-
ձակալութեան գինքն որոշել անուանուել էր՝
փոխանորդ ուղղի տնտեսութիւն . ուստի և թատե-
րաց մատակարարութիւնն գինքն է բոլորովին
իւր ձեռքէն էր, որպէս զբրտասաններն և գուսանն
ներն որոշել, հանգէաններն կարգադրել, խազ-

ցուելիք նիւթերն ալքէ անցուցանել, և տեսա-
րաններն կազմել, և այլն : Ուստի օրագրի մէջ
ընթեռնելով փրանկիացի դաշնակաւորին համար
գրուած ծանուցումն, մտածեց որ եթէ յիրաւի
այս օրիորդն տաղանդ և հանձնար ունի, իւր բա-
նին կարող է գալ և մեծ շահ մի ձեռք բերել . ուս-
տի ել և զնաց Մարքէզ Աննա-Անիի տունն, և
գերմանացի պարտնի մի գուռագութեամբ՝ որ փոք-
րիկ լեռներն իւր ստեղծածն կը համարի՝ նմա
ներկայացուց : Իսկ մարքիզն ցուրտ քաղաքովա-
րութեամբ մի զնա ընկալաւ իշխանազուն մար-
դու մի պէս, որուսմ գոթադղութիւնն մոռցնել չէր
տուած իւր ազգատոհմին աշուճականութեան
նշաններն . և երբ Տէր Պրանս իմացուց նմա
իւր այցելութեան պատճառն, մարքիզն ապա-
ս և գրեթէ ասպետական համարմանգութիւն մի
ձեռնցնելով պատասխանեց . « Իմացուց : Տիկին
մարքիզուհւոյն պաշտպանելոյն համար է խօս-
քերիդդ, սա դաշնակաւոր աղջկանն . այս ա-
սացած էր կնոջ վերաբերեալ գործ մի է . զի
սէք որ այսպիսի բանեցու ես չեմ միջամտիր ,
ասելով զանգակն զարկաւ : Փոքրիկ աղախին մի
ներս տաւա՝ որ բոլոր տան սպասաւորն այն
փայն էր : « Տիկին մարքիզուհւոյն իմաց տուր,
ասաց, որ օրիորդն տեսնելու մարդ եկած է » :
Պարտն փրանկերէնն շատ լաւ կը յատկարար,
և միայն զնելով թէ թերևս իւր աղջկը կեցող
մարդն ալ իրեն չափ լեռներ ու դաշտեր ստեղ-
ծած լինի, իւր կերպն փոխեց, և որչափ առիթ
բերան ամարդի երևցէ էր՝ անկէ ետև այնչափ
բարեկերէն և քաղաքավար կերպ մի առաւ :

Եւս չքեց Աննա և իւր մայրն երեցան . Ան-
նա իւր հոր յայնմն առած գէրն րնական կերպով
ձեռնցնելու համար՝ իւր վախկտաւորութիւնն մեկ
գի զնելով պարտնին հարցմանցն ինքն պատաս-
խան տալ սկսաւ . բայց սակաւին փոքրիկ տաղանդն
յայտնի կրեւելէ՝ իւր սակաւ իր խռովանք կեր-
պէն . վերադադն այսպիսի իմացուց թէ Փրան-
կիոյ մէջ փոքր իշխան էրաժշտութեան հրահան-
քած լինելով և չուղղելով որ իւր բարեբարացն
ծանոթութիւն լինի նոցա քաղաքական մէջ՝ կը
փափաքէր քանի մի աղջիկ աշակերտներ ունել,
և երաժշտութեան, երգի և դաշնակի դաս տալ : —
« Սակայն, օրիորդ, պատասխանեց պարտնն ինքն
քաղցր ձայնին և մաքուր գերմաներէն խօսուած-
քին վրայ զարմանալով և համեստ ու ամօթ-
խած կերպով վրայ հիանալով, ինչ ձեւերի թէ
գուր գէտ շատ մանկահասակ էք ասացած պաշ-
տանիդ վարելու համար » : — Աննա պատասխան
տալու տեղ գաշնակն քաղաւ, և արագագոյն
մատերով նախեքանք մի առնելէն ետև, սրտա-
շարժ և հնչեղ ձայնիւ Իրգէի այն երգն երգեց որ
կը սկըսի . Ո՛հ, որպէ՛ք գնէ՛նք Խաղաղք ծննդա՛նս :
Պարտն իւր զմայլունն չկարելով ծածկել՝
եւսնողուն կերպով մի ասաց . « Ա՛հ, օրիորդ, յի-
րաւ Բելչինի շատ մեծ վարպետ է, բայց կարծեմ
թէ քան զձեզ աւելի արժանաւոր թարգման մի
ունեցած է » : — Աննա պարտնին այս քաղաքա-
վարութեանն վրայ կարմրեցաւ . սոկայն հորա
գովեստներէն բաշտելեալ, Մոզարի գեղեցիկ
խառնածներէն մին սկսաւ հարկանել այն .
պիտի գերազանց եղանակաւ . որ ինքն պարտն
բոլորովին իրմէ դուրս էլնելով իւր ունեցել

չմարիտ հիացու մե չկարաց ծածկել: — Ա երբ սակաւ զի ինքն իրեն եկի՝ դարձաւ ասաց մարքիզուհայն: «Տիրելի՛մ ձեր պաշտպանեալն կարգէ դուք տաղանդ մի կ'երեցնէ և այնու կարող է մեծ հարստութիւն ձեռք ձգել: Միայն պէտք է որ քաղցրիս մէջ ծանօթանայ: Եւ ալ ձեռքէն եկանն պիտի առնեմ՝ որ անտնօթ չմնայ: Ազգն չէ միւս օր ի խիթէնչիւն իշխանն մեծ ցայգա. հանդէս մի պիտի կատարէ իւր պալատին ուր պիտի ժողովին: Ահմէտի բոլոր իշխանագունք. որովհետեւ Օրիորդն այն ժողովոյն մեծ փառք ու պարծոնք կարէ լինել, ուստի եթէ կը հաճիք հաւանելու՝ իշխանն ալ անտարակոյտ զնէզ պիտի հրաւիրէ որ դուք ալ ձեր ներկայութեամբն իր հանդէսն փառաւորէք, և ձեր շարատար պաշտպաններն ձայնն լռել տայք:

— Ի խիթէնչիւն իշխանն, ասաց մարքէզն, բայց ես պատիւ ունիմ զինքն ճանաչելու. նա ինքն է որ բարեհաճեցաւ զիս կայսերազուն Ասորոս արքիզբոյն ներկայացնելու:

— Ապա ևս առաւել, տէր իմ, պատասխանէք պարոնն, այս ալ աւելի պատաճառ մի է իշխանին հրաւերքն ընդունելու:

Յիրաւի սակաւ ժամանակէն հրաւիրանոց տոմսանի հասաւ. զոր իշխանն իւր յատուկ ձեռքէն դրած դրած իշխորհայի կերպով մի մարքէզին և մարքիզուհայն, աղաչելով որ հետեւին իրեն որ օրիորդն: Արքէզն ալ շատ հաճելով իշխանին մտադրութեանն՝ որոշեց երթալու և նորա խնդրի կատարելու:

Ի խիթէնչիւն այսի ապարանքն մանտանգ թէ սլաւանն՝ կարի ճիւղութիւն և գեղեցիկ շաշակով զարդարուած էր. ամեն սենեակներն Պոնտփոյ բերեղեայ շահերով լուսաւորած, և մեծ դահլիճն ուր պիտի կատարուէր հանդէսն՝ Օմասնեան դահլիճ՝ հ'անուանէր՝ որովհետեւ կահնրն բոլոր արեւելեան ձեռով շինուած էին՝ բազմոցներով, բարձերով և գորգերով զարդարուած գետնին հարուստ տախտակածան ալ կահնրուն գեղեցիկութիւնն աւելի դուրս կը յայտնէին, և լուսոյ հեղեղ մի ամեն տեղ կը ծաւալէր: Այն բեկից երգահանդէս մի պիտի կատարուէր: Եննայի մէջ եղած տնտեսին երաժիշտներն լռելու համար. որովհետեւ իշխանն երաժշտութեան շատ կ'սիրածէր, և արուեստասէր տնտեսանին իրեն պարծանք կը համարէր, շատ անգամ ալ հանդիսին պարտուելու և առաջին ընթացակահարն կուգէր լինել՝ որ երաժշտոց խմբին շատ հաճոյական չէր անցնէր, որովհետեւ իշխանն ձայնաշափին ճիշդ չարմարեղան համար՝ իրենք ալ կը ստիպուէին ձայնն երազել կամ գանդաղել: Բայց այն օրն ինքն բոլորովին զրաւած լինելով իւր հիւրերն ընդունելու՝ իւր գործակցութեանն հրաժարեցաւ՝ ի մեծ ուրախութիւն երաժշտոց. այնպէս որ երգահանդէսն գերմանացի մեծ վարպետն շարարած գեղեցիկ խմբաձայնին սկըսաւ՝ բոլոր երաժշտոց և նուագաժողով միաժայնութեամբ: Այս խմբաձայնէս ետե՛ Պրանս պարոնն մօտ քսան տարուան երիտասարդ մի ներկայացուց գաշնակին առջին, որ այնպիսի տարահրեւելութեամբ աւարտեց իւր մասն՝ որ բոլոր հանգիսականք ծափաձայնութեամբ զինքն ողջուցնէին. բաւական լիցի ասել որ այն երիտա-

տորգ գաշնակահարն նոյն ինքն Հիւսմէլ էր՝ որ իւր յոյնատարաստից յաղթութեամբն և հմուտ շարագրածներովն բոլոր աշխարհ հռչակաւոր եղած է:

Խեղճ Անտալու հասկցաւ Հիւսմէլի գերզանցութիւնը, և իւր համեստութեամբն միտքն դրաւ թէ շատ հեռու էր ինքն նմա հաւասարելուն, և գրեթէ յուսահատած կը ցուէր թէ ինչո՞ւ այնպիսի յուսալը նետուէր էր. և կը վախէր որ բաւորովին անյաղող պիտի էլնէր այս մրցանքէս, և ծնողացն զգալու արտմութիւնն ալ միտքն բերելով՝ սիրտն մարմնուք կուգար: Եթէ միտակ լինէր՝ անկարելի բան էր որ յանձն առնուր այս մրցանքս. աւելի լաւ պիտի համարէր յանկարծական տկարութիւն մի կ'էղէր: Հանդիսին գուրս էլնել և քաշուել էր՝ ալ բայց իւր ծնողաց յոյսն ու անկախութիւնն իր վրայ էր, միթէ կարէր մրցանալն տանելու վայրէկներն էտ քաշուել և միթէ ամօթ չէր իրեն՝ օրագրաց մէջ պարծենալով ինքզինքը՝ ծանուցանելէն յետոյ՝ թուղուլ և խուսափել: Այս բաները մտքն անցնելով՝ իրեն սովորական հարգք բանեցուց՝ որդի յաղթութիւնն ամեն ժամանակ փորձուցէր, և Աստուած իմ, ասաց ինքն իրեն, դու որ սրբատեղէս ես՝ դիտես որ մարգիւնց առջև փառաւորիս չեմ ուզեր հապա շահտիս քրտինքովն: Միայն իմ հօրս ու մօրս հացն շարքէլ գու. զորացոյ զիս այս մրցանացս մէջ՝ որոյ մէջ այժմ գտանիմ: Այս ասելով ոյժ առաւ, սրտին ստատիկ բաւախութեմ զարգեցաւ, և ծնողաց վրայ աչուր ներն դարձնելով՝ կարծես թէ նոցա ասել կուգէր. « Հաճեցա՞ս եղբ, կը յուսամ որ պիտի չյայտնուիմ, որովհետեւ ձեր օգուտն պաշտպանել է իմ միտքս »:

Նոյն տանն պարոնն ալ ներկայացաւ և ձեռքն անոր մատոց. Աննայի վրայ եւս անկախութիւնն ունէրն արգէն գիտեմք. բայց նորա շարատարութիւն աւելի գուրս ցայտնայնելու համար՝ մեծանուն արուեստագիտի մի առջին հանել ուզեց զիս, որպէս զի աւելի շքեղ յաղթութիւն մի վատեցիր: Յիրաւի պարոնն տաղանդէ հասկցող մարդ լինելուն համար՝ առջի անգամ օր լսեց այն որ օրիորդին գաշնակի մեկնէ իմացում որ սա գերմանացի գաշնակահարէն աւելի մատանց թէթևուութիւն և ճիւղանութիւն ունէր, աւելի պարզութիւն և ստատիկ շքութիւն, և այնպիսի քաղցր ու փափուկ զարմուած մի որ մարդուս միտքն կը յափշտակէր, և որովս զի բոլոր հանդիսականք ալ կարող լինին զինտա իրարու հետ համատեղ և բաղդասել, չուգէց որ Հիւսմէլի գործած աղբեղութիւնն մտաւոր կամ տկարաւոր միջանկով ապաւարութիւններով, այլ անմիջապէս այն երիտասարդին ետեւ օրիորդն հրաւիրեց և գաշնակին առջին տարաւ. և ինչպէս որ գուշակէր զի ճիշդն կատարուեցաւ — Առջի բերան հանգիսականք վեր ի վերոյ ուշադրութիւն մի մատուցելու աւելի իշխանագիտի քաճաճութեան գոհացնելու համար. որովհետեւ մի կարող էր համոզուել որ հաշիւ տանուութեամբ տարաւ առջիկ մի իրենց հաճութիւն մի օտաւաճաւ այնպիսի հռչակաւոր վարպետէ մի ետեւ: Եւ մտքերն ալ գիշերով թէ այն աղջկան գործածն ուրիշ բան չէր՝ բայց եթէ կարգէ գուրս յանձնապատ-

առնուած ինչ և յանգագնութիւն՝ պատրաստուել էին ամենայն խտուրթեամբ զինքն դասելու: Բայց նայիս դաշնակէն փառաշիններն այնպիսի խանդակած ծայրեր սկսան լսուիլ՝ որ ամենքն զարմանալով անկնել կը զննէին՝ անակնկալ բանի մի պէս. յետոյ զարմանդին հիացման փոխուեցաւ, հիացումն ալ հանրական հաւանութեան նշաններու և ծափահարութիւններն այնչափ սաստիկացան և երկրորդին մինչև պարուն Պարան յառաջ մտալելով՝ աղաչեց ունկնդրաց որ լռեն՝ եթէ չէին ուզեր ստեղծիին (adagio) զուար. ճութենէն զրկուիլ որ պիտի սկսէր:

Եթէ առաջին հատուածին մէջ Աննա իւր ունկնդիրներն զարմացուցել էր մատաղայն արւա գունթեամբ, ստեղծւոյն մէջ բանեցուցած թաղ. ցրտն ծառերն ալ ամոնուն միտքն յափշտակեց. և վերջապէս հատուածին վերաբանով մի տարտեւ. լով այնքան ամենուն խնայել չարժէք՝ տարած յաղթութեամբ՝ որ ունկնդիր ծափահարութեան զատ սկսած նաև միաբերան գոչել: Եւ կեցցէ մեծ գաշնախաճարն փրակիկացին: Լիխթենշ. Թայն իշխանն ալ որ գաշնակին բով կանգնած էր՝ Աննայի մօտեցաւ, և գողցեն նորա միւս այլ կատարութիւնն ալ հանգիստականացող զանեւ. լաւ համար՝ սկսաւ հետն գերմաններն խօսիլ և ցուցած մեծ հանճարոյն վրայ զինքն շնորհաւորել: Աննա ալ համետ պատկառանք պատաս. րեհնէր իրեն որուած գողցեստներն՝ իշխանին բա. րեհնաշնութեան արգելիքն համարելով: Անգիւն շինամէջ ալ օրիորդին բռնի վազեց և իւր ուրա. խակցութիւնն նմա կը յայտարար, այլոց տուած գողցեստներուն ծայրակից լինելով: Իսկ պարտ. նին սուքն գետեհն կը կտրէր, և Աննայի յաղ. րութիւնին իւր գործն կը համարէր. և միտքն զալով Թէ Աննա գողցելի ծայն ալ ունէր ու. կ'երգէր՝ ուղեց որ նոր յաղթութիւն մի ալ ստա. նայ նոյն հանգիսին մէջ: — Աւստի մարքէդին և մարքէդուհւոյն մօտեանալով (որ կը ցաւէին Թէ ինչպէս չէին կարող յայտնել Թէ Աննա իրենց զաւանն էր), հարցուց Թէ արդեօք օրիորդն բաւական երաժշտութիւն ալ զետէր և վրաս. հութեամբ յանձն կարող էր առնուլ երկվայրի մի մօտնակից լինելու: Մարքէդն պատասխանեց Թէ իրեն այնպէս կերեկր Թէ կարող էր: Այն ստեհն պարուն Աննային բռնի գառնալով առաց Թէ հանգիստգրաց խոստացուած էր Մոզարի Տոն Թուանի մի երկվայրին ալ, բայց Վէյց օ. բրորդն որ յանձնառու եղած էր այն մասին կա. տարմանն յանկարծակի տկարութիւն մի ունե. լով պիտի ստիպուէին այն մասն թողլու. և վերջապէս առաց Թէ արդեօք ինքն յանձն կառ. նոյր այն օրիորդին տեհն բռնել: (Բարեւոյ է պա. տասխանեց Աննա, եթէ հատուածն շատ գը. ժուար չէ) — Եւ Ահաստիկ այն հատուածին, ա. սան պարուն, և Թէ կուզէք ալ զէ անցուցէ) — Աննա հատուածն ալ զէ անցնելն ետև առաց. Ե շատ լաւ, կերպեմ):

Շուտօքինն առաջին աղբն չնչնած, պարունն հանգիստառեաց գառնալով իմացուց Թէ Վէյց օրիորդն յանկարծակի տկարութիւն մի ու. նեղել և հանգիսին լիարելով գալ՝ Օրիորդ Աննա յանձնառու եղած էր նորա մասն կատարելու. ուստի ունկնդրաց ներողամտութիւնն կը խըն.

գրէր՝ որովհետև Օրիորդ Աննա ժամանակ չէր ունեցած նոյն հատուածն ալ զէ անցնելու՝ որ նմա բոլորովն անծանօթ էր: Պարունն այս ա. ռաջարկի ծափահարութեամբ ընդունեցան հան. գիտականը նոր զուարճութեան մի ակնկալու. թեամբ, և իրարաւ տակին, Եւ Թէ դաշնակ զար. կածին պէս երգել ալ քիտէ, յերաւել թաշաղիաց մին է այս փրակիկացի օրիորդն, ուր թողուցէ իւր շնորհակ իհրայն ու գողցեցութիւնն):

Աննա իւր յուսացածէն աւելի յաջողեցաւ, այնպէս որ Լիխթենշ. Թայն իշխանն լսած քաղցրա. ծայրութիւններին բոլորովն յաջողութեամբ՝ նմա մօտեցաւ և նորա ձեռքն բռնելով հանեց իր մօտէն ազամանդեայ շքեղ մատանին և նորա մօտն անցուց: Աննա չուզեց ընդունիլ. բայց իշխանն վրայ բերաւ. «Օրիորդ, ասաց, այս մա. տանիս գրաւական մի լինի. զեւ այն հաճոյից զոր դուք այսօր ինձ պարգևեցիք»: Ետոյ ինչն ան. ձամբ բերաւ զնա և նստոյց մարքէդուհւոյն թովն, նմա ալ իւր ուրախակցութիւններն և շնորհակա. րութիւններն մատուցանելով: Գետոյ մարքէ. զին գառնակնով յայտնեց իւր ցաւն՝ որ չէր կո. րողացած արջիչքսին համար տուած խօսքն կա. տարելու, և ապահովուց զինքն որ ստիչ ա. ու ինձ ձեռքէ պիտի չգիսխնէն նմա օգտակար լինելու համար. և Ետոյ ստաց. «Տիկնայց հա. մարթեթեւաշին մի պատրաստուած է, յուսած որ ինձ պատիւ անէլք բոլոր այս երեկոյնս հոս անցնելու. Ետոյ իմ կառօք զէւ տներնիդ տանիլ կուտամ. ինչ ասեցէ:

Մարքէդն ներումն խնդրելով հրաժարեցաւ. Գերմանացուց գողցութիւնն զիսկելով կը վա. խէր որ հանգիսին հրաւիրեալ իշխանուհիք և մեծուհիք չգողցարին Աննայի պէս պարզ ա. րուեստագէտ մի իրենց աղնուական խմբին մէջ խառնուած տեսնելով: Իշխանն ալ նորա միտքն հապնալով շատ մարգաղաւորութեամբ պատաս. խանեց. «Օրիորդ Աննա միշտ պատիւ է այնցիկ՝ որ նորա ներկայութեամբ կուրախանան մեծա. մեծ հանճարներն մեծամեծ իշխանաց հետ հա. ռասարաբայլ կրննանց, և արժանաւորու. թիւնն՝ ամենէն ստոյգ աշնուականութիւնն է. եթէ Օրիորդն Աննա ձեր հարազատ զաւակն ալ լինէր աւելի չէի կարող մեծարել զինքն)»:

Եթէ Աննա յիշարէ այն լինէր ինչ որ երեւել կուզէր՝ այս խօսքերս իրեն շատ հաճոյ պիտի լինէր, բայց մարքէդին գուտարն լինելուն հա. մար իրեն ծանր եկին: Մայրն իմացաւ զաւակն արտէն անցածն, և իշխանին աղաչեց որ ներէ իրենց տեղերնին թաշաղիւ, իւր հիւանդոտ լինելի պատճառ բերելով, և այնպէս ցաւ ձեւ. ցուց իշխանին հրաւերեց ընդունել չկարելուն վրայ, որ վերջապէս նա ալ համոզուեցաւ բաժ. նուեղել այն օրիորդին որ իւր երգահանգիսին անկն գնէլնի տարէ կը կուչէր: Այս մի զինքն խոս. քիս վրայ Աննա կարմրեցաւ. բայց առջի խոս. քիս տպաւորութիւնն արտէն բնաւ չէր ինքն. ուստի շնորհակալ եղել իր ծերն որ զինքն աղա. տեց այն իշխանուհեաց ընեղք հաղաւ և մի հարց. փորձներէն:

Կը շարունակուի.

ՏԵ ՄԱՐԿԵ